ARMENIC
www.armenic.am
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հասցե ՀՀ, ք.Երևան, 0002, Ամիրյան փող. 27
Հեռ./Ֆաքս (+374 10) 530 904
Էլ. փոստ՝ info@armenic.am

02 46/M-0549-ՕМ
15.04.2019թ.

Հայաստանի Հանրապետության
Կրթության և գիտության նախարարության
Ֆինանսաբյուջետային վարչության պետ
Վահրամ Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Կից Ձեզ ենք տրամադրում ‹‹Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն›› հիմնադրամի կողմից *բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացված ճաճափին* կից հիմնավորումը:

Հարգանքով՝

Տնօրեն Գ. Հարությունյան

2020-2022թթ-ի համար բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափին կից հիմնավորում

ԱՓՇԱՏԿ հիմնադրամի ֆինանսավորման չափը 2019թ-ին ՀՀ պետական բյուջից կազմում է 47 259.5 հազար ՀՀ դրամ: Համաձայն բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափի՝ 2020-2022թթ-ի համար հիմնադրամը ներկայացրել է **55 165.5 հազար ՀՀ դրամի** հայտ: Ֆինանսավորման չափի ավելացման սույն առաջարկը է պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- Հիմնադրամի աշխատակիցների աշխատավարձները վերանայվել են 2014թ-ին: Սակայն հաշվի առնելով, որ վերջին հինգ տարիններին աճել է գրասենյակի կողմից իրականցվող աշխատանքի ծավալը, ինչպես նաև երկրում տեղի ունեցած գնաճը և դրամի արժեզրկումը՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայել հիմնադրամի անձնակազմի աշխատավարձերը և ավելացնել 15 տոկոսի չափով՝ 4906 հազար ՀՀ դրամ:
- Գրասենյակի գործունեությունը ենթադրում է համագործակցություն և անդամակցում միջազգային կառույցներին: Հաշվի առնելով արդի տեխնոլոգիական զարգացումները և որակավորումների թվայնացման մարտահրավերը՝ հիմնադրամը նախատեսում է անդամակցել «Գրոնինգեն դեկլարացիա» ցանցին (Groningen Declaration) և «Որակավորումների գնահատման միջազգային մասնագետների ասոցիացիա»-ին (The Association for International Credential Evaluation Professionals (TAICEP)): Յուրաքանչյուր կառույցի տարեկան անդամակցության վճարը կազմում է մոտ 1000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ (2 կառույցների տարեկան անդամավճարը մոտ 1000 հազար ՀՀ դրամ):
- ԱՓՇԱՏԿ-ի գործունեության և ոլորտի զարգացման համար կարևոր է մասնակցությունը ռեգիոնալ (Տոկիո) և Գլոբալ կոնվենցիաների միջկառավարական տարեկան հանդիպումներին: Նախատեսվում է տարեկան 2 հանդիպում՝ յուրաքանչյուր հանդիպման հետ կապված գործուղման ծախսը կկազմի մոտ 1000 հազար ՀՀ դրամ (ընդհանուր ծախսը կկազմի մոտ 2 000 հազար ՀՀ դրամ):
- Նախորդ տարիների քանակական ցուցանիշները վկայում են, որ ընդունվող գործերի քանակը տարեց տարի ավելանում է և գերազանցում նախատեսվածը, ուստի 2020-2022թթ-ի համար սահմանվել է նոր քանակական ցուցանիշ՝ 910 գործ: